



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 օգոստոսի 2025 թվականի N 1150-Ա

**ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ «ԳԱՆՁԱԿԻ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման» կարգը հաստատելու մասին 2000 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանի 7.-րդ կետի 5) ենթակետով, **որոշում եմ**

1. Հաստատել Գավառի համայնքապետարանի ենթակայությամբ գործող «Գանձակի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար 2025 թվականի օգոստոսի 14-ին հայտարարված մրցույթի մրցութային հանձնաժողովի կազմը՝ հետևյալ անդամներով.

Վարդուհի Խաչիկի Վարպետյան /ՏԿ և ՏԻՀ վարչության գլխավոր մասնագետ/
Գեղամ Գևորգի Չարվադարյան /ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի
կրթության, մշակույթի և սպորտի
վարչության գլխավոր մասնագետ/
Գրիգոր Ռազմիկի Բոշյան /Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ/
Մարիամ Ալբերտի Համբարձումյան /Գավառ համայնքի ավագանու անդամ/
Մարիետա Հարությունի Համբարձումյան /Գիտական հաստատության ներկայացուցիչ/

2. Մրցութային հանձնաժողովի քարտուղար նշանակել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Կարինե Մանուկյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. օգոստոսի 14
ք. Գավառ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 օգոստոսի 2025 թվականի N 1151-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ Ք. ԳԱՎԱՌ ՀԱՅԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ
ՓՈՂՈՑ ԹԻՎ 54 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԱՆԴՐԱՆԻԿ ՍԼԱՎԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 18.04.2025թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 07.04.1991թ. թիվ 19 որոշումից քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով /տրված 31.07.2025թ/ գույքի նկատմամբ ժառանգ Անդրանիկ Սլավիկի Կարապետյանի /ծնված 12.10.1967թ-ին/ լիազորված անձ՝/լիազորագիր տրված 20.03.2025թ-ին/ Կարինե Զարգանդի Պետրոսյանի դիմումը, «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ համայնքի ք. Գավառ Հացառատ Թաղամասի Ազատամարտիկների փողոց թիվ 54 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.14 հա, ինչը փաստացի կազմում է 0.17 հա, որը Անդրանիկ Սլավիկի Կարապետյանի /ծնված 12.10.1967թ-ին/ ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական և ինքնական կառուցված 452.30 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1967-2002թթ-ին./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.17 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**

1. Վերականգնել Գավառ համայնքի ք. Գավառ Հացառատ Թաղամասի Ազատամարտիկների փողոց թիվ 54 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Անդրանիկ Սլավիկի Կարապետյանի /ծնված 12.10.1967թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար 0.14 հա օրինական հատկացված հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.03 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.17 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 436.00 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1967-1999թթ.-ին/ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:


2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, ք. Գավառ Հացառատ Թաղամասի Ազատամարտիկների փողոց թիվ 54 հասցեն:

3. 2002 թվականին կառուցված 16.30 քմ մակերեսով ավտոտնակը ճանաչել ինքնակամ շինություն:

4. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

5. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ԲՈՇՅԱՆ

2025թ. օգոստոսի 14
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 օգոստոսի 2025 թվականի N 1152-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ Ք. ԳԱՎԱՌ Ա. ԲՈՇՆԱՂՅԱՆ ՓՈՂՈՑ 8/1 ԿՐՊԱԿ ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏԵՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՕՐԻՆԱԿԱՆ
ՃԱՆԱԶՎԱԾ ԿՐՊԱԿԸ, ԿՐՊԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» 34-րդ, 35-րդ, 35.1-րդ, 36-րդ, 37-րդ և 39-րդ կետերի, Գավառ համայնքի ավագանու 08 օգոստոսի 2025 թվականի թիվ 8 նիստի թիվ 149-Ա որոշման պահանջներով և հիմք ընդունելով ինքնակամ կառույցն իրականացրած անձ Հարություն Գարսևանի Զքոյանի՝ Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումը և օրինականացման համար սահմանված վճարների անդորրագրերը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառուցված կրպակը օրենքով սահմանված կարգով օրինականացվել է որպես համայնքային սեփականություն /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման վկայական N 28062025-05-0002, տրված 28.06.2025թ./,

որոշում եմ

1. Գավառ քաղաքի Ա. Բոշնաղյան փողոց 8/1 կրպակ հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, օրինական ճանաչված 4.88 քմ արտաքին /4.49 քմ ներքին/ մակերեսով կրպակը, կրպակի զբաղեցրած ու սպասարկման համար նախատեսված 0.00087 հա մակերեսով հողամասը, համապատասխանաբար կրպակի 1/մեկ/ քառակուսի մետրի համար 12798 /տասներկու հազար յոթ հարյուր իննսուներեք/ ՀՀ դրամ արժեքով, ընդամենը 62500 /վաթսուներկու հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ, կրպակի համար առանձնացված 0.00087 հա մակերեսով հողամասը՝ յուրաքանչյուր 1/մեկ/ քառակուսի մետրի համար հողի կադաստրային արժեքով՝ 1877.7 / մեկ հազար ութ հարյուր յոթանասուներեք ամբողջ յոթ/ ՀՀ դրամ, ընդամենը 16400 տասնվեց հազար չորս հարյուր / ՀՀ դրամ և տվյալ միավորի նկատմամբ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարների փոխհատուցման վճարների 35000 /երեսունհինգ հազար/ ՀՀ դրամ արժեքներով, ուղղակի վաճառքով օտարելու ինքնակամ կառույցն իրականացրած անձ՝ Հարություն Գարսևանի Զքոյանին:

2. Շենք-շինությունները չեն հակասում քաղաքաշինական նորմերին և դրանց մակերեսները որոշվում են քարտեզագրման, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպությունների /անձի/ կողմից տրված հատակագծերին համապատասխան:

3. Հանձնարարել աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արա Գևորգյանին՝ օրենքով սահմանված կարգով Հարություն Գարսևանի Չքույանի հետ կնքելու ուղղակի վաճառքի պայմանագիր:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. օգոստոսի 15
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 օգոստոսի 2025 թվականի N 1153-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ Ք. ԳԱՎԱՌ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՆՐՔԱՆՑՔ 5-ՐԴ
ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 10 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ՄՀԵՐ ՎԱՀԱՆԻ ԴԱԴՈՅԱՆԻ, ԷՄՄԱ ՎԱԶԱԳԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ, ՎԱՀԱՆ ՄՀԵՐԻ
ԴԱԴՈՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 21.04.2025թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 05.11.1991թ. թիվ 270 որոշումից քաղվածքը, 23.07.2025թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, «Խաչատուր Ավեյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ համայնքի ք. Գավառ Ազատության փողոց 2-րդ նրբանցք 5-րդ փակուղի թիվ 10 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.11 հա, ինչը փաստացի կազմում է 0.10654 հա, որը Միեր Վահանի Դադոյանին /ծնված 12.11.1955թ-ին/ ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 159.70 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1950թ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.10654 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**


1. Վերականգնել Գավառ համայնք ք. Գավառ Ազատության փողոց 2-րդ նրբանցք 5-րդ փակուղի թիվ 10 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Մհեր Վահանի Դադոյանի /ծնված 12.11.1955թ-ին/, Էմմա Վաչագանի Գրիգորյանի /ծնված 05.08.1957թ-ին/ Վահան Մհերի Դադոյանի /ծնված 06.01.1981թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.10654 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 159.70 քմ մակերեսով շինությունների /կառուցված 1950թ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք, համաձայն 21.04.2025թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 05.11.1991թ. թիվ 270 որոշումից քաղվածքի և 23.07.2025թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրում առկա բաժնեմասերի:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ, համայնք ք. Գավառ Ազատության փողոց 2-րդ նրբանցք 5-րդ փակուղի թիվ 10 հասցեն:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ԲՈՇՅԱՆ

2025թ. օգոստոսի 18
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 օգոստոսի 2025 թվականի N 1154-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ Ք. ԳԱՎԱՌ Գ. ՊԵՏՐՈՎԻ ՓՈՂՈՑ 6-ՐԴ ՆՐՔԱՆՑՔ ԹԻՎ 11
ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ
ՆԱԽԱՏԵՍԱԿԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԳԱՌՆԻԿ ՌԱՖԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ, ՔՆԱՐԻԿ ԳԱՐՍԵՎԱՆԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ
ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 07.04.2025թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 07.04.1991թ. թիվ 19 որոշումից քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով /տրված 04.07.2025թ/ գույքի նկատմամբ ժառանգ Գառնիկ Ռաֆիկի Սահակյանի /ծնված 12.11.1960թ-ին/ դիմումը, «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ համայնքի ք. Գավառ Գ. Պետրովի փողոց 6-րդ նրբանցք թիվ 11 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.10 հա, ինչը փաստացի կազմում է 0.12984 հա, որը Գառնիկ Ռաֆիկի Սահակյանի /ծնված 12.11.1960թ-ին/ ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական և ինքնակամ կառուցված 290.80 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1958-2005թթ-ին./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.12984 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**

1. Վերականգնել Գավառ համայնքի ք. Գավառ Գ. Պետրովի փողոց 6-րդ նրբանցք թիվ 11 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Գառնիկ Ռաֆիկի Սահակյանի /ծնված 12.11.1960թ-ին/, Քնարիկ Գարսևանի Եղիազարյանի /ծնված 10.04.1935թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար 0.10 հա օրինական հատկացված հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.02984 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.12984 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 240.30 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1958-1998թթ.-ին/ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, ք. Գավառ Գ. Պետրովի փողոց 6-րդ նրբանցք թիվ 11 հասցեն:

3. 2005 թվականին կառուցված 50.50 քմ մակերեսով շինությունները ճանաչել ինքնակամ շինություն:

4. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

5. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. օգոստոսի 15
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 օգոստոսի 2025 թվականի N 1155-Ա

**ԱՆՉԱՓԱՀԱՍ ԷՄԱՆՈՒԵԼԱ ԷԴՎԱՐԴԻ ՄՈՒՂՈՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՄՈՐԱՔՐՈՋԸ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՄԱՍ ՌՈՔԵՐՏԻ ԵՆՈՔՅԱՆԻՆ ԽՆԱՄԱԿԱԼ
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24/ կետի, «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2016թ. հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 3-րդ գլխի 9-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ, հիմք ընդունելով Գավառի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 14.08.2025թ. նիստի արձանագրությունը, **որոշում եմ**

1. Անչափահաս Էմանուելա Էդվարդի Մուղոյանի (ծնված՝ 02.10.2012թ., անձնագիր՝ AU 0370505, տրված՝ 27.07.2021թ. 040-ից) իրավունքների ու շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով նրա նկատմամբ սահմանել խնամակալություն:
2. Էմանուելա Էդվարդի Մուղոյանի խնամակալ նշանակել նրա մորաքրոջը՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Համաս Ռոբերտի Ենոքյանին (ծնված՝ 20.03.1969թ., ՌԴ քաղաքացու անձնագիր՝ 45 13 451672, տրված՝ 07.04.2014թ. 770-039-ից):
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 օգոստոսի 2025 թվականի N 1156-Ա

ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության <<Սևան ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի տնօրինությունը գրությամբ իրազեկել է Գավառ համայնքի ղեկավարին այն մասին, որ Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության գրության և տրամադրած նյութերի հիման վրա ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնում հարուցվել է վարչական վարույթ, որի արդյունքում պարզվել է, որ <<Սևան ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի կողմից <<Գավառնի>> ՍՊԸ-ին վարձակալությամբ տրամադրված Լճափ գյուղի ափամերձ տարածքի 20 000 քմ մակերեսով հողամասում առկա են ինքնակամ շինություններ և տաղավարներ: Առաջարկվել է վերոհիշյալ իրավախախտումները կանխելու և վերացնելու ուղղությամբ ՏԻՄ օրենքով սահմանված կարգով ձեռնարկել համապատասխան միջոցներ:

10.06.2025թ.<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի հիմքով Գավառի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենքագրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տուգանքի գանձման նպատակով: 2025 թվականի հունիսի 19-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԵ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՓԱՍՏԵՐԸ

Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայության կողմից 2024 թվականի հոկտեմբերի 23-ին ուարկված գրության և ներկայացված նյութերի հիման վրա ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Գեղարքունիքի տարածքային բաժնում հարուցվել է վարչական վարույթ:

Հարուցված վարույթի արդյունքում պարզվել է, որ

- Լճափ գյուղի ափամերձ տարածքի 20 000 քմ մակերեսով հողամաս, որի վրա առկա են ինքնակամ շինություններ և տաղավարներ, օգտագործման իրավունքով պատկանում է ոչ թե <<Անդե պարտներս>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, այլ <<Գավառնի>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

- Դեռևս 2006 թվականի հուլիսի 24-ին <<Գավառնի>> ՍՊ ընկերությունը 25 տարի օգտագործման ժամկետով <<Սևան ազգային պարկ>> պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել է նշված տարածքի վարձակալության պայմանագիր:

- 2006 – 2023թթ. ժամանակահատվածում <<Գավառնի>> ՍՊ ընկերության տնօրեն է եղել Մարտին Մուշեղի Չանդոյանը, ով 11.10.2022թ. մահացել է:

- 2023թ. փետրվարի 22-ին <<Գավառնի>> ՍՊԸ տնօրեն է նշանակվել Դավիթ Ենգիբարյանը:

2025թ. հունիսի 10-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի հիմքով Գավառի համայնքապետարանի աշխատակազմում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2025 թվականի հունիսի 19-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին հրավիրվել և մասնակցել է <<Գավառնի>> ՍՊԸ տնօրեն Դավիթ Ենգիբարյանը:

Վարչական վարույթի լսումների ժամանակ <<Գավառնի>> ՍՊԸ տնօրեն Դավիթ Ենգիբարյանը տվեց բացատրություն այն մասին, որ 2006 թվականի հուլիսի 24-ին <<Գավառնի>> ՍՊԸ-ն քսանհինգ տարի օգտագործման ժամկետով <<Սևան ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի հետ կնքել է Լճափ գյուղի ափամերձ տարածքի 20 000 քմ մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիր: 2006 – 2023թթ. ժամանակահատվածում <<Գավառնի>> ՍՊ ընկերության տնօրեն է եղել վաղամեղիկ Մարտին Մուշեղի Չանդոյանը, ով էլ հավանաբար կատարել է նշված աշխատանքները: 2023թ. փետրվարի 22-ին <<Գավառնի>> ՍՊԸ տնօրեն է նշանակվել ինքը և իր պաշտոնավարման ժամանակահատվածում իր նախաձեռնությամբ նշված տարածքում որևէ շինարարական աշխատանքներ չեն կատարվել, տաղավարներ չեն տեղադրվել:

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԵ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասի, գյուղական բնակավայրերում հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա առանց թույլտվության շենք, շինություն կառուցելը կամ տեղադրելը առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 219¹-րդ հոդվածի 3-րդ մասի, տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց իրավասության սահմաններում քննում են նույն օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը, իսկ նույն հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ տեղական ինքնակառավարման մարմնի անունից վարչական իրավախախտման վերաբերյալ գործերի քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի համայնքի ղեկավարը:

Համաձայն Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24) կետի, համայնքի ղեկավարն իր իրավասության շրջանակներում ընդունում է որոշումներ, իսկ 28) կետի՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 9) կետի համաձայն, <<վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝... 9) այն անձի մահը, որի նկատմամբ սկսված է եղել գործի վարույթը>>:

Վարչական գործում առկա VIII-ՊԿ N 731795 մահվան վկայականի համաձայն <<Գավառնի>> ՍՊ ընկերության տնօրեն է Մարտին Մուշեղի Չանդոյանը, ով առանց թույլտվության շենք, շինություն է կառուցել կամ տեղադրել, 11.10.2022թ. մահացել է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 50-րդ և 58-րդ հոդվածների դրույթներով, **որոշում եմ**

1. Կարճել Լճափ գյուղի ափամերձ տարածքի 20 000 քմ մակերեսով հողամասում առկա ինքնակամ շինությունների կառուցման և տաղավարների տեղադրման համար 2025թ. հունիսի 10-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի հիմքով Գավառի համայնքապետարանի աշխատակազմում հարուցված վարչական վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է վարչական կարգով բողոքարկվել Գավառի համայնքի ղեկավարին՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում, կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 օգոստոսի 2025 թվականի N 1157-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ Ք. ԳԱՎԱՌ ԱՐԾՎԱՔԱՐ ԹԱՂԱՄԱՍԻ Գ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ 1-ԻՆ
ՓՈՂՈՑ 6-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 2 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ
ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱԼԻՊՍԵ ՎԱՐԱԶԴԱՏԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ, ԳԱԳԻԿ
ՌՈՒԲԻԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ,
ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՆՇՎԱԾ ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ՓԱՏՏԱՑԻ ԱՎԵԼ
ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0.10396 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի պահանջներով, ՀՀ Հողային օրենսգրքի 64 հոդվածի 2 և 3 կետերի պահանջներով, 18.05.2006թ. ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին՝ ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով 26.03.2025թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 27.04.1991թ. թիվ 8 որոշումից քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով /տրված 23.07.2025թ-ին/ գույքի նկատմամբ ժառանգ Կալիպսե Վարազադատի Ղազարյանի /ծնված 08.03.1944թ-ին/ դիմումը, «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն, որոնց Գավառ համայնքի ք. Գավառ Արծվաքար Թաղամասի Գ. Միքայելյան 1-ին փողոց 6-րդ նրբանցք թիվ 2 հասցեում գտնվող ընդհանուր հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.22 հա, ինչը փաստացի կազմում է 0.36795 հա, որից 0.26399 հա հողատարածքը օրենքի ուժով հանդիսանում է Կալիպսե Վարազադատի Ղազարյանի /ծնված 08.03.1944թ-ին/ ժառանգության իրավունքով պատկանող հողամասը, իսկ դրան կից փաստացի ավել ծգտագործվող 0.10396 հա հողամասը ճանաչել համայնքային սեփականություն և գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի կարգով՝ 1 քմ-ի համար հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքի 30%-

ի չափով՝ 155 ՀՀ դրամ, օտարել նշված հասցեի սեփականատերերին և հաշվի առնելով, որ օրինական և ինքնակամ կառուցված 321.00 քմ մակերեսով շենք-շինությունները /կառուցված 1972-2005թթ./ որոնց կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.36795 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**

1. Վերականգնել Գավառ համայնքի ք. Գավառ Արծվաքար Թաղամասի Գ. Միքայելյան 1-ին փողոց 6-րդ նրբանցք թիվ 2 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Կալիպսե Վարազադատի Ղազարյանի /ծնված 08.03.1944թ-ին/ Գագիկ Ռուբիկի Ղազարյանի /ծնված 06.06.1970թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված 0.22 հա մակերեսով հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.04399 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.26399 հա մակերեսով հողամասի օրինական կառուցված 313.60 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1972-1986թթ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:
2. Գավառ համայնքի ք. Գավառ Արծվաքար Թաղամասի Գ. Միքայելյան 1-ին փողոց 6-րդ նրբանցք թիվ 2 հասցեում գտնվող 0.26399 հա հողատարածքին կից փաստացի ավել օգտագործվող 0,10396 հա մակերեսով հողամասը ճանաչել համայնքային սեփականություն՝ տրամադրելով Գավառ համայնք, ք. Գավառ Արծվաքար Թաղամասի Գ. Միքայելյան 1-ին փողոց 6-րդ նրբանցք թիվ 2/1 հասցեն և գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի կարգով օտարել Կալիպսե Վարազադատի Ղազարյանին /ծնված 08.03.1944թ-ին/, Գագիկ Ռուբիկի Ղազարյանին /ծնված 06.06.1970թ-ին/ հողամասի 1 քմ-ի համար կադաստրային արժեքի 30%-ի չափով՝ 155 /մեկ հարյուր հիսունհինգ/ ՀՀ դրամ՝ ընդամենը $1039.6 \times 155 = 535400$ /հինգ հարյուր երեսունհինգ հազար չորս հարյուր/ ՀՀ դրամ Գավառի համայնքապետարանի 900175101345 հաշվեհամարին վճարելու պայմանով:
3. Բնակելի տանը տրամադրել Գավառ համայնք, ք. Գավառ Արծվաքար Թաղամասի Գ. Միքայելյան 1-ին փողոց 6-րդ նրբանցք թիվ 2 հասցեն:
4. Հանձնարարել աշխատակազմի համապատասխան աշխատակցին՝ օրենքով սահմանված կարգով Կալիպսե Վարազադատի Ղազարյանի /ծնված 08.03.1944թ-ին/, Գագիկ Ռուբիկի Ղազարյանի /ծնված 06.06.1970թ-ին/ հետ կնքելու 0.10396 հա մակերեսով հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր:
5. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:
6. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:
7. 2005 թվականին կառուցված բնակելի տան 7.40քմ մակերեսով հատվածը ճանաչել որպես ինքնակամ շինություն:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2025թ. օգոստոսի 18
ք. Գավառ



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 օգոստոսի 2025 թվականի N 1158-Ա

**ԱՆՉԱՓԱՀԱՍ ԱՐԱՄ ՄԱՐԱՏԻ ՂԱՋՈՅԱՆԻ ԵՎ ՆՐԱ ՀՈՐ՝ ՄԱՐԱՏ ՆՈՐԻԿԻ
ՂԱՋՈՅԱՆԻ ՏԵՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 54-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24/ կետի, «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2016թ. հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրությամբ, ելնելով անչափահասի իրավունքների ու շահերի պաշտպանության անհրաժեշտությունից հիմք ընդունելով Գավառի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 13.08.2025թ. նիստի արձանագրությունը, **որոշում եմ**

1. Իրարից առանձին ապրող անչափահաս Արամ Մարատի Ղաջոյանի և Նրա հոր՝ Մարատ Նորիկի Ղաջոյանի տեսակցության կարգ սահմանել յուրաքանչյուր շաբաթ և կիրակի օրերին, ժամը 15:00-ից մինչև ժամը 18:00-ն, Մարատ Ղաջոյանի տանը:
2. Անչափահաս Արամ Մարատի Ղաջոյանին տանելու և բնակության վայր վերադարձնելու պարտականությունները վերապահել հորը՝ Մարատ Ղաջոյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



2025թ. օգոստոսի 19
ք. Գավառ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 օգոստոսի 2025 թվականի N 1159-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով քաղաքացիներ Մելքոն Յուրիկի Խեքոյանին, Կարեն Յուրիկի Խեքոյանին, Անի Յուրիկի Խեքոյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասերից / վկայական N 2716673 տրված 2011 թվականի օգոստոսի 02-ին / հրաժարվելու մասին դիմումը, **որոշում եմ**

1. Քաղաքացիներ Մելքոն Յուրիկի Խեքոյանին, Կարեն Յուրիկի Խեքոյանին, Անի Յուրիկի Խեքոյանին սեփականության իրավունքով պատկանող գ. Սարուխան հասցեում գտնվող 0.02 հա մակերեսով 05-078-0506-0327 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության խոտհարքը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունելուց հետո՝ 15-օրյա ժամկետում այն ներկայացնել կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման համար:
3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 օգոստոսի 2025 թվականի N 1160-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ Ք. ԳԱՎԱՌ ՔԱԼԱՇՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 10
ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ
ՄԱՐԻԱՄ ՎՇՏՈՒՆԻ ՀԱՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 15.07.2025թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 05.11.1991թ. թիվ 270 որոշումից քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով /տրված 24.07.2025թ/ գույքի նկատմամբ ժառանգ Մարիամ Վշտունի Հովհաննիսյանի /ծնված 24.09.1956թ-ին/ լիազորված անձ՝/լիազորագիր տրված 04.07.2025թ-ին/ Գարիկ Ռազմիկի Ներսոյանի դիմումը, «Հայր և Որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ համայնքի ք. Գավառ Քալաշյան փողոց 1-ին փակուղի թիվ 10 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.06 հա, ինչը փաստացի կազմում է 0.06847 հա, որը Մարիամ Վշտունի Հովհաննիսյանի /ծնված 24.09.1956թ-ին/ ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 261.37 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1955թ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.06847 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**


1. Վերականգնել Գավառ համայնքի ք. Գավառ Քալաշյան փողոց 1-ին փակուղի թիվ 10 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Մարիամ Վշտունի Հովհաննիսյանի /ծնված 24.09.1956թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար 0.06 հա օրինական հատկացված հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.00847 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.06847 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 261.37 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1955թ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, ք. Գավառ Քալաշյան փողոց 1-ին փակուղի թիվ 10 հասցեն:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ԲՈՇՅԱՆ

2025թ. օգոստոսի 19
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 օգոստոսի 2025 թվականի N 1161-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ Ք. ԳԱՎԱՌ ՀԱՅԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ Ա. ԲՈՒՌՆԱԶՅԱՆ 2-ՐԴ
ՓՈՂՈՑ 2-ՐԴ ԱՆՑՈՒՂԻ ԹԻՎ 9 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՄՎԵԼ ՄԱՑԱԿԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 22.10.2024թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 07.04.1991թ. թիվ 19 որոշումից քաղվածքը, 22.07.2025թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ համայնքի ք. Գավառ Հացառատ թաղամասի Ա. Բուռնազյան 2-րդ փողոց 2-րդ անցուղի թիվ 9 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.12 հա, ինչը փաստացի կազմում է 0.10351 հա, որը Սամվել Մացակի Մելքոնյանին /ծնված 18.07.1959թ-ին/ ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական և ինքնակամ կառուցված 299.40 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1968-2020թթ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.10351 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**

1. Վերականգնել Գավառ համայնք ք. Գավառ Հացառատ թաղամասի Ա. Բուռնազյան 2-րդ փողոց 2-րդ անցուղի թիվ 9 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Սամվել Մացակի Մելքոնյանի /ծնված 18.07.1959թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.10351 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 297.70 քմ մակերեսով շինությունների /կառուցված 1968-1999թթ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ, համայնք ք. Գավառ Հացառատ թաղամաս Ա Բուռնազյան 2-րդ փողոց 2-րդ անցուղի թիվ 9 հասցեն:

3. 2020 թվականին կառուցված 1.70 քմ մակերեսով շինությունը ճանաչել ինքնակամ շինություն:

4. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

5. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



2025թ. օգոստոսի 19
ք. Գավառ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 օգոստոսի 2025 թվականի N 1162-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ Ք. ԳԱՎԱՌ Մ. ՍԱՐԻՆԳՈՒԼՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ43 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԱՐԱՏ ԷԴԻՍՈՆԻ ԹՈՒՄԲՈՒԼՅԱՆԻ,
ԴԱՎԻԹ ԷԴԻՍՈՆԻ ԹՈՒՄԲՈՒԼՅԱՆԻ, ՀՐԱՅՐ ԷԴԻՍՈՆԻ ԹՈՒՄԲՈՒԼՅԱՆԻ
ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

